



ՎԱՐՉԱՄ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ  
ԽՈՐԵՆ ՄԵՅԻՆԱՆԱԶՅԱՆ

**ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐ  
ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**

Հայ ժողովրդի երածշտական մշակույթն ունի վաղեմի և հարուստ ավանդույթ, որը գալիս է դարերի խորքից: Եվ չնայած այն հանգամանքին, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ ենթակա է եղել բարբարոս ազգերի հաղածանքներին ու երանց դաժան, ճընշից քաղաքանակությանը, այնուամենայնիվ կարողացել է պահպանել իր ազգային ինքնուրույն երածշտական ժառանգությունը:

Նախքան գրերի գյուտը, եկեղեցական ժամերգության հիմքը սաղմոսերգությունն էր՝ հունական և ասորական լեզուներով: Բայց գրերի գյուտից հետո, երբ հիմք դրվեց հայ դպրության, ժամերգությունը սկսում են կատարել հայերեն և սաղմոսներին փոխարինում են շարականները: Որեմն, մեր երաժշտական պատմության վերաբերյալ ամենին տվյալները գալիս են Ե-րդ դարից:

Հետազոտում, հայոց վանքերում ծաղկում, մեծ թափ են ստանում մեր այժմյան եկեղեցական հարուստ երածշտության տեսակները՝ շարականը, հոգևոր երգը, պատարագը, մելեղին, տաղերը, գանձերը, ստեղիները: Որպես երածշտական կենտրոններ՝ հայտնի են եղել Կամքաջանորի, Նարեկի, Կապուտաքարի, Հնաուց, Դարեկվանքի, Ստեփանոսի, ինչպես նաև Տաթևի և Հաղարծնի վանքերը:

Հայ մատենագիրները բազմաթիվ անուններ են բխում, որոնք հետինակ են հանդիսացել մեր եկեղեցական երածշտության: Ամենից առաջ հիշվում են ս. Սահմակ և ս. Մեսրոպ, որոնք համարվում են հայ դպրության

հիմնադիրներ<sup>1</sup> Սովուս Քերթոլ, Ստեփանոս Սյունեցի, Հոհան Մանդակումի, Կոմիտաս կաթողիկոս, Սահմակ Զորափորեցի, Հոհան Օձնեցի, Պետրոս Գետաղարձ, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Վկայակար, Ներսես Շնորհալի, Խաչատոր Տարոնեցի, Հակոբ Կյալեցի և այլն:

Ինչպես բոլոր քրիստոնյա երկրներում, այնպես էլ մեզ մոտ հոգևոր եկեղեցական եղանակները աղավաղումներից փոխվու և կորատից ապահովելու հարցը հետու է գալիս: Եկեղեցական եղանակները ձայնագրելու համար հորինվել են զանազան մեծության-ձևի պայմանական հշանեներ (խազեր), որոնք ունեցել են ձայնանիշների՝ նույնականություն:

Խազերի սիստեմը ընտրելուց հետո ձայնագրել են (խազավորել) շարականները, մեղեղիները, տաղերը, գանձերը, ստեղիները:

Թռ ե՞րբ են հորինել հայ երածշտական խազերը, այդ մասին ստուգ տվյալներ չկան: Բայց կան ենթադրություններ, ըստ որոնց

<sup>1</sup> Ղազար Փարպեցին «Պատմություն հայոց» աշխատության մեջ խոսվով 5-րդ դարում գործող Մետրոպ Մաքտոցի գործակից Սահմակ Պարթևի մասին, գրում էր, որ նա անգնահատելի ծառապություն է մատուցել եկեղեցական երգերի ստեղծագործության, յուրացնան, արմատափրման բնագավառում, այն էլ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ դեռ խապաշը վերացվել բնական աղդեցությունը:

իրեն թե խազերը բերել են Կիլիմիխայից կրամ արևելքից:

Հստ Կիրակոս Գաճճակեցու վկայության, Խաչատոր Վոր, Տարոնեցին խազերը բերել է Արևելյան Հայաստան և տարածել Սյունիքում, Արարատյան դաշտավայրում, Շիրակում և այլն («Ո կողման յարենելից»)<sup>2</sup>:

Ճշմարտությունը, սակայն, մնում է անքափանցելի: Այժմ ընկհանուր կարծիքն այն է, որ մեր երաժիշտ-հեղինակները հորինելով եկեղեցական եղանակները, միաժամանակ ստեղծել են և այդ երաժշտական խազերը:

Հայկական խազերի ուսումնասիրությամբ գրադիվել են և օտարազգի շատ երաժշտագետ տեսաբաններ: Այս առջիվ Կոմիտոս վարդապետը նետևլան է ասում.

«Հայկական խազերով կարելի պիտի ըլլա ոչ միայն հայկական հին երաժշտությունը ուսումնասիրել, այլ և ուսումնասիրել որիշ ազգերու հին երաժշտությունները՝ ինչպես և հովենականը, որոնց մասին դժբախտաբար որևէ ուսումնասիրության աղբյուր գոյություն չունի աղմն, մինչ հայ ձեռագիրները ավելի ավանդապահ գտնված են գործուրանքով պամելու համար հայկական հին երաժշտության աղբյուրները, որոնցմենք թերևս երաժշտագետները օգտվեն ժամանակակից որիշ երաժշտությունները պրայտելու համար»<sup>3</sup>:

XVIII դարի սկզբներին (1711-ին) Եվրոպացի հայտնի գիտնական Շրեռուերը լույս տեսած «Գաճճարան հայոց լեզվի» իր աշխատության մեջ խոսում է հայկական հին խազերի վերծանման հշանակության մասին: Բայց չի ասում, թե որտեղից են այդ խազերը բերվել Հայաստան:

Խազերի վերծանման ողղությամբ ուսումնասիրություններ են կատարել նաև ականավոր գիտնականներ՝ Պետերմանը, Ֆերդի, Ֆլայշեր, Օրդի, Վագներ, Բիրը և այլն: Երկար տարիներ շարունակ հայկական հին խազերի ուսումնասիրությամբ գրադիվ է նաև Կոմիտոս Վարդապետը: Իսկ թե ինչ արդյունքի է հասել Կոմիտոսը, հարկ ենք համարում բերել այստեղ «Տաճար» կիսամյա հանդեսում լոյս տեսած հրա նամակապատասխանի որոշ հատվածներ:

«Դրավ է, ես գտել եմ հայ խազերի բանին և նոյնիսկ կարում եմ պարզ գրքանքները, բայց դեռ վերջնակետին չեմ հասել. զի լորաքանչյուր խազի խորհրդավոր իմաստին թափանցելու համար, նոյնիսկ

<sup>2</sup> Կիրակոս Գաճճակեցի, «Պատմություն հայոց», Երևան, 1961, էջ 212:

<sup>3</sup> Կոմիտոս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 196:

տասնյակ ձեռագիրներ պրայտելով, երբեմն ամբողջ են սահման: Իսկ ձեռքիս տակ եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են անայնմ: Մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք խիստ շատ են:

Այսպիսի գուտ մասնագիտական խնդիրների մասին անհնարին է գրել մեր պարբերական մամուլի էջերում այս պատճառով՝ նաև պարբերական մամուլի էջերը շատ տղ են, երկրորդ՝ գուտ գիտական, տարիներ շարունակվող ուսումնասիրություններով հասարակությանը զբաղեցնելն աննպատակ է, երրորդ՝ խոշոր ու մեծաքանակ ծախս է պահանջում, և չորրորդ՝ ուսումնասիրությանը վերջակետ չեմ դրել:

Մի այսպիսի ուսումնասիրություն կատարելության հասցենու համար պետք է ներկուն լինել տիրապեսերու հրա հիմնական ուսումնաքններին ու գիտություններին՝ տարսաշիրության, վանկաչափության, առոգանության, շեշտադրության, կետադրության, խազաշփության, խազագիտության, լեզվի (բառերի հնկական և հին առման), իմաստափության (երկրաչափության, թվաբանության, աստղաբաշխության և երաժշտության՝ առմամբ), խազերի ծագման, զարգացման, անկրան և արդի պատմության—համամատական խազաբանության և այլն, և ապա կարելի է գաղտնիքն երևան հանել: Թող հայ հասարակությունը ներող, մասնավանդ համբերող լինի, մինչն որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնելու իմ տասնվեցամյակից ավելի տևող տաժանագին ուսումնասիրություններս, հույս ունիմ, թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականությունը պետք է դառնա»<sup>4</sup>:

Կոմիտոսի ասածներից պարզվում է, որ նա ավելի քան տասն և վեց տարի ուսումնասիրություն կատարելով, այնուամենակենիվ խազերի վերաբերյալ կատարած իր աշխատանքները դեռ չի պարտել և որ կարնորն է, ամբողջովին չի պարզել, թե ո՞ր գծագրական խազը, հշանը ի՞նչ նոտա է ներկայացնում և ինչպես պետք է երգել այն. ուրիշ խոսքով արտահայտած, խազերի բանալին լրիվ չափով դեռ չի պարզել և այդ ողղությամբ աշխատանքները դեռ շարունակվում են:

Հստ պատմական տվյալների, հին խազերի գործածությունը ծաղկման շրջան է ապրել X դարից սկսած և տևել է մինչև XV դարի վերջը: XVI դարում նա կորցնում է իր հշանակությունը և դատապարտվում խապա-

<sup>4</sup> Կոմիտոս Վոր., Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 166—167:

մոռացության: Խակ XVII դարի սկզբից, արդեն ոչ որ չէր կարողանում հասկանալ դըրական օշանակությունը:

Խագերը մոռացության դատապարտվելով, կաւկած չկա որ աղավաղութան և կորսույթան պետք է դատապարտվեին նաև հոգեոր-եկեղեցական երգերը:

Երածութության տեսարաններն միանգամացն հավանական են համարում աղավաղութան պետք վտանգը: Արևմտահայ ականավոր երաժիշտ (տիրացոյ) Բարս Համբարձումը (Լիմնջյան) խորապես գգարով պետք վտանգի առկայությունը, մոտածում է ունենալ երածոյթական նոր ձայնահիշեր, թե շարականների երգեցողությունը դյուրացնելու և թե հոգեոր-եկեղեցական երգերն աղավաղութանից և կորսութիւնի համար:

Նա նոտաների գծագրական ձևը հիմ խագերից վերցնելով և եւլուպական երածությանը մոտեցնելով, հնարում է հայկական հոտագորությունը:

Խակ ո՞վ էր Բարս Համբարձումը:

Նա խարբերդի էր: Հայոք՝ Սարգիսը, քայլարի հարստանարիշ հարկահանների ձեռքից ազատվելու համար, ընտանիքով տեղափոխվում է Կ. Պոլիս: Այստեղ, 1768 թվականին ծնվում է Համբարձումը: Հայրը նրան տալիս է դերձակության: Այդ արհեստը յուրացնելուց հետո նա պետք արհեստով չի զրադվում: Լինելով ունակ երածոյթության մեջ, նա իրեն նվիրում է պետք արվեստին: Քաջածանոթ էր արևելյան եղանակներին: Հմուտ էր հունաց եկեղեցական խաղերին և երածոյթությանը: Ահա պետք Բարս Համբարձումն է, որ հորինում է յոթ թիմնական ձայնահիշեր հետևյալ անուններով. փուշ, եկորճ, վերնախաչ, թենորն, խոսրովային, ներքնախաղ և պարույք: Բայց պետք է ասել, որ անունները հայկական չեն, այլ արաբական: Խնչո՞ւ: Որովհետու Բարս Համբարձումը ինքը իր փորձերն էր կատարում էր տաճիկ-արաբական նվազարանի թամբուրի վրա, որ ամեն լար ուներ իր հատուկ արաբական անունը:

Սակայն, հետո նկատելով, որ ձայնահիշերի բազմավանկ անուններով արտահայտել երգ-եղանակը անհնարին է, Բարս Համբարձումը կրճատում, վերցնում է միայն անվան առաջին վանկը.

**Փո, է, վե, բե, խո, նե, պա:**

Կարծիք կա, իբր թե նախքան Բարս Համբարձումը կային պետք ձայնահիշերը և պահպում էին ուն Տյուզյան Հովհաննես Շեներին մոտ, որտեղից Համբարձումի ձեռքն են անցնում, որը և մշակում, հրապարակ է հանում:

Այս մասին Կոմիտաս վարդապետը վկայում է.

«Այն կարծիքը, որ իբր թե նախքան Բարս Համբարձումը եղել են այժմյան ձայնահիշերը, հավանական չեն. ծանանակալից ականատես անձինք այդ պատիվը վերագրում են իրավամբ Բարս Համբարձումին: Այդ ձայնահիշերով ձայնագրեցին ինչպես հոգեոր-եկեղեցական, այնպես էլ ժողովրդական, գուանական և այլ ազգային երգեր»:

Ժարականը ձայնագրելու առաջին փորձը կատարել է ինքը՝ Բարս Համբարձումը և հասցրել մինչև ս. Զատկի օրինությունը՝ «Ակար յարեալը» 1839 թվականին: Բայց նա շուտով մահանում է և սկսած գործը մնում է անավարտ: Այդ դեռ բավական չէր, նոր ձայնագրած բոլոր նյութերը անհետանում են:

Երկրորդ փորձը արել է երաժիշտ Եղիա Տնտեսյանը և ավարտել 1870 թվականին: Հետագայում եկեղեցական եղանակները աղավաղության մեջ փորձելու և անաղարտ պահելու համար Անենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-րդը 1870 թվականին Պոլսից ս. Էջմիածնին է հրավիրում երածոյթագետ Նիկոլոս Թաշճյանին և պատվիրում իր դեկանավորությամբ ձայնագրել բոլոր շարականները, տաղերը, մեղեղիները, գանձերը, ստեղիները:

Զայնագրման աշխատանքներին մասնակցում էին նաև Մակար Եկմալյանը, դպիր Պողոս Վարդապետ Շեահյան Զինկերցին և հմուտ երգիչներ: Մասնակցում էր նաև ինքը՝ երածոյթագետ կաթողիկոսը:

Այդ տարիներին ձայնագրվեցին շարականը, տաղերը, մեղեղիները, գանձերը, ստեղիները և վերջապես պատարագի արարությունը:

«Ձայնքաղ շարական»-ը առանձին հատուրով հրատարակվեց Էջմիածնում, 1875 թվականին: Դրան հաջորդեց նաև եկեղեցական հոգեոր երածոյթյան մյուս հասկածների տպագրությունը: Հաջորդվեց մոռացությունից ու կորսութիւնի կարծիքը:

Միջանկյալ ասենք, որ պետք եղանակների մի խոշոր մասը կազմում է այսպես ասած Պոլս կամ արևմտահայ հատվածը: Հետագայում ձայնագրվեց նաև Էջմիածնի երգահատվածը՝ Կոմիտաս վարդապետի անմիշական մասնակցությամբ:

Սակայն պետք է ասել, որ հայ հոգեոր-եկեղեցական երգերը ամեն տեղ միատեսակ չեն եղանակ: Դա բացարկվում է նրանով, որ հայ ժողովուրդը օտարերկրյա բարբարոս ազգերի արշավանքների հետևանքով գտղ-

թի ենթարկվելով, ցաք ու ցրիվ է եղել երկրի զանազան մասերում: Ամեն մի վայրում կառուցել է իր ենթեցին ու դպրոցը: Նա միաժամանակ ստեղծել է իր տեղական երգեցողությունը (Կամ հնի տարբերակը): Օրինակ, այդ վայրերի թվին են պատկանում Պոլիսը, Երևանականը, Վենետիկը, Վիեննան, Բուքելը, Մարտասը, Կալկատան, Թեղուսիան, Կամենակ-Պոդլուկը, Լվովը, Նոր Նախչեվանը և այլ քաղաքներ: Նոյն ճակատագրին են ենթարկվել նաև հայ ժողովրդական երգերը, պարեղանակները:

Անիից գաղթած հայերը բնակություն հաստատելով Ղրիմում, Թեղողոսիայում, Սուրբ խաչ, հին Ղրիմ, Սիմֆերոպոլ, Ղարաբու-Բազար և այլն, տարել են իրենց հետ Անլո երգերը և երկար ժամանակ պահպանել են ինչպես ծիսական-ժողովրդական, անպես էլ հոգևոր-եկեղեցական երգերը: Այդ երգերը ժամանակին չեն ձայնագրվել և դրա համար էլ աղավաղվել են, նույնիսկ մոռացվել:

Այժմ, շնորհիվ մեր ազգագրական գիտարշավների, գրի են առնվում այդ հոյութերը: Սակայն բավականին փոփոխված վիճակում:

Բայց հպարտությամբ կարող ենք ասել, որ մինչև մեր օրերը պահպանված միակ աղբյուրը, մեր հայկական երաժշտությունն է, մեզ շատերին անձանոյ հին խաղերն են և մեր այժմյան կիմուչյան ձայնագրությունը: Մեր հայկական միջնակարգ դպրոցներում՝ Շուշվա, Երևանի թեմական, հնչպես նաև Ներսիսյան դպրոցում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում երաժշտության առարկան ոչ միայն եվրոպական ձայնահշեներով էին անցնում, այլ նաև հայկական: Հայկական երաժշտություն էին ավանդություն և առևտություն և առաջարկություն: Այդ դասառությունին թվին են պատկանում՝ Նիկողայոս Թաշճանը, Գարեհել Երանյանը, Մակար Եկմալյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Գևորգ Չորեքչյանը, Կոմիտասը, Արշակ Բրույերը, Պողոս Կարապետյանը, Սահմանականին, Եղիշե Բաղդասարյանը և ուրիշներ: Հատկապես մեծ է և նշանակալից Մակար Եկմալյանի կատարած աշխատանքները: Բայց, դժբախտաբար, հայկական այդ ձայնագրության կյանքը երկար չտևեց: Այն նոյնական դուրս է մնում գործածությունից, իսկ մեր օրերում բոլորովին մոռացության է տրված և երանով ոչ ոք չը գրադաւում: Դա մասամբ բացատրվում է այն բանով, որ Երկրաբում հարաճուն կերպով զարգանում է բազմաձայն երաժշտությունը, որն արտահայտելու համար «հայկական» կոչված այդ

ձայնագրությունը (Բարձա Համբարձումի) շատ անհարմարություններ ունի:

Մինչդեռ բոլոր ազգերի մոտ, ինչպես նաև մեզ մոտ XIX հարի վերջերին բոլոր դպրոցներում սկսեց կիրառվել եվրոպական երաժշտության սիստեմը: Ուրեմն, զարմանալի չէ, որ հայկական ձայնագրությունը տեղի տվեց եվրոպական նոտաներին: Բայց Կոմիտասը, որ էլ լիներ, իր լած ժողովրդական երգերը ձայնագրում էր հայկական ձայնահշերով և երբ եվրոպատում էր տուն, վերածում եվրոպական նոտաների:

Նա գտնում է, որ ավելի դյուրին է երգերը ձայնագրել հայկական ձայնանիշերով:

Պատահել է, գյուղամիջով անցնելիս, մի բակից լսել է երգ և պետք է ձայնագրեր: Սակայն թուղթ չունի իր մոտ, կամ ավելի շուտ մոռացել է իր ծոցատերը վերցնել, այդիսի դեպքերում, առանց ժամանակի կորցնելու, երգը ձայնագրում էր տաշենի՝ տախտակի կամ թիթեղի թերթիկի վրա:

Նորին Ս. Օծություն կաթողիկոս հայոց S. S. Վազգեն Ա-ն, ի նկատի ունենալով այն համագումանը, որ հայկական ձայնագրությունը դուրս է մնում գործածությունից և որ մեր օրերում արդեն մոռացության է տրված, միտք է հղանում հոգևոր ճեմարանում դասավանիտել տալ հայկական ձայնագրություն: Ներկայումս հոգևոր ճեմարանում արդեն անցնում են հայկական ձայնագրություն, յուրաքանչյուր դասարանում հատկացնելով շաբաթական մելական ժամ: Աշակերտները նետաքրքրվում են այդ առարկայով և շանում են յուրացնել: Կան աշակերտներ, որ արդեն ազգային կերպով կարողանում են կարդալ և երգել:

Հայկական ձայնագրության և եվրոպական նոտագրության միջև մի առանձին խոշոր տարրերություն չկան: Հայկական նոտագրությունը տարվում է առանց հնգային գծերի: Բայց այդ, գամմայում (հիմնական) կես տոն ձավները ընկած են մի-փա և սի-դր ձայնամիջոցներում: Հայկականում ընկած է առաջին քայլակում այնպես, ինչպես եվրոպական երաժշտության մեջ, իսկ երկրորդ քայլակում ընկած է նե-պա (որ համապատահանում է եվրոպական երաժշտության լա-սի նոտաներին):

Տարբեր են և դիեզ-բիմոլ գործածելու բովանդակության մեջ: Այսպես, հայկականում գործ են ածում միայն մի նշան (մի փոքրիկ գիծ, որ թեք կերպով դրվում է նոտայի գլուխին և կոչվում է կիսաձայնանիշ և նայած, թե ինչպես է գործադրված, ըստ ալմ է և ան ունենում է իր նշանակությունը, որ կոչվում է կիսվեր (դիեզ), կիսվար (բիմոլ): Օրինակ, գրված է «փո»—«է» (կիսաձայնա-

նիշ վրան) և «վէ». այս դեպքում կիսաձայնահանիշով «է» նոտան կարդացվում է: «է» լիսիլեր, իսկ եթե գրված է այսպէս «վի»—«է» (կիսաձայնահանիշով) և «ըրէ» այս օրինակում «է» նոտային հաջորդող «վէ» նոտան բացակառում է, չկա: Այդպիսի դեպքում կիսաձայնահանիշով նոտան «է»-ն, կարդացվում է բացակարող նոտայի անունով «վէ» կիսվար և այլն:

Ինչ վերաբերում է ներքին կանոններին, երանք համապատասխանում են իրարտարբերությունը միայն արտաքին պատկերի մեջ է: Այսինքն, նոտաների և նոտային չափերի արտահայտության մեջ: Օրինակ, նոտայի մոտ (եվրոպական) եթե դնում ենք կետ (.), այդ կետը ավելացնում է տրված նոտայի բախման կեսը: Իսկ հայկականում կետը մի քառորդ բախման է, որտեղ նոտայի մոտ դնելով, նաև ավելացնում է տվյալ նոտայի բախման վրա ևս մի քառորդ բախման և այլն:

Թանգարանի երաժշտական բաժնում կան հայկական ձայնահանիշերով ձայնագրված բազմաթիվ երաժշտական գործեր: Դրանց վերծանումը (փոխադրումը) եվրոպական նոտաների և ուսումնափրությունը վառ լույս կափում մեր երաժշտական մշակույթի պատմության դեռևս չհետազոտված կողմերի վրա:

Այսպես, օրինակ, հայկական երգերի և երաժշտական նորութերի փոնդում կան.

1. 210 էջանոց մի տեսորակ, որտեղ ձայնագրված են հայկական ձայնահանիշերով 1874 թվականին, Պոլսում արևմտահայ երաժշտագետ Նիկողայոս Թաշճյանի կողմից:

2. Հովհաննես Տեր-Գրիգորյանի ձայնագրած «Մեղրեցվոյ» երգերի 430 էջանոց սովոր տեսորը. 1887 թվականին ս. Էջմիածնի Գնորդյան ճեմարանում ուսանելու ժամանակ ձայնագրել է մի շարք երգեր՝ հայկական ձայնահանիշերով, հազ գրողների շափածո ուսանավորների հիման վրա:

3. «Ծաշակը Յարութեանց կիրակէից, մաղթանը կայսերական տօնի և շարականը հոգեհանգստեան»: Տեսորը բաղկացած է 20 թերթից և տպագրված է 1888 թվականին: Հեղինակը անհայտ է:

4. Հետաքրքրություն է ներկայացնում «Չարականք կիրակէից և Ս. Զատկի» վերնագրով 88 էջանոց տեսորը, որը խմբատիպ է, հեղինակը դարձյալ անհայտ է:

Կարծում ենք, որ մեր թանգարանում գտնվող վերնիշշալ բոլոր նյութերը պետք է փոխադրել եվրոպական նոտաների, պահպանելով դրանք մեր երաժշտության, մեր նոր սերնդի համար:

Մայր Աթոռում արդեմ ձեռնամոխ են եղել շարականների վերծանումն մեծ գործիք: Արդեմ փոխադրված է եվրոպական նոտաների՝ տպագրական 380 էջ. աշխատանքները շարունակվում են:

Մենք գտնում ենք, որ մեր հին երաժշտության գանձերը անպայման պետք է փորկել մոռացումից և աղավաղումներից և դրանք վերածել եվրոպական նոտաների, միանգամ ընդմիշտ համոզվելով, որ այդ երաժշտությունը հայրական հաշմակությունը ունի հայ ժողովրդի անցյալ հոգևոր կրանքի պատկերման համար:

Հակայական է Էջմիածնի Գնորդյան ճեմարանի կատարած դերը նոր երաժշտությունի պատրաստման, երաժշտական գիտելիքների տարածման, կատարողական վարպետության, խմբերգային արվեստի պահպանությունների ամրապնդման բնագավառներում: Այստեղ լուրջ հիմքերի վրա է դրվել երաժշտական առարկաների դասավանդումը, առաջին հերթին հայկական նոտագրության ուսումնասիրությունը և խմբական երգեցողությունը: Հայ երաժշտության շատ ականավոր գործիչներ, այդ թվում Մակար Եկմալյանը, Գրիգոր Միրզոյանը (Սյունի), Ա. Բրուոյանը, Սահիրիդուն Մելիքյանը և շատ որիշեներ, իրենց ակզենտական երաժշտական կրթությունը ստացել են Գնորդյան ճեմարանում: Հայտնի է նաև, որ Դոմիտաս վարդապետի երաժշտական կրթության բավական հիմնավոր շրջանը ճեմարանում անցած տարիներն են եղել, երբ նա աշակերտ է եղել Սահակ վրդ. Ամասունու:

Այսօր Էջմիածնի հոգևոր ճեմարանը երաժշտական բնագավառում ևս արժանակիր ժառանգն է հանդիսանում մեր երաժշտական մշակույթի և արվեստի:

Էջմիածնի հոգևոր ճեմարանը բարձրագույն ուսումնական հաստատություն է՝ բաղկացած երեք դասարանական և երեք լարանական բաժիններից: Այստեղ ուսանողները մյուս հանրակրթական առարկաների կողքին սովորում են նաև երաժշտություն (եվրոպական և եկեղեցական): Երաժշտական առարկաների դասավանդումը դրված է հաստատում հիմքերի վրա, որովհետև, ինչպես Լամբրոնացին է ասում «Ազդումն երաժշտական եղանակին... ընդունուցեալ զարդուցան զմիսու ամենեցուն առ ի տեսչումն շնորհին. քանզի չիք ինչ որ զիամս մեր յեղաշրջէ յուրահութիւն կամ ի տրտմութիւն որպէս գերգոցն ձայն, յործամ որպէս պարտըն է լինիցի. վասն այսօրիկ և եկեղեցական ասանդութիւն ընկալա զայն լարտաքնցն» (Լամբրոնացի, ի մեկնութիւն պատրագի):

Երածտությունը այն առարկան է, որը արթնացնում է միտքը, ազնվացնում մարդու հոգին: Երգը անբաժան է մարդուց թե՛ ուրախության և թե՛ սխրության պահերին:

Ծեմարանի երածտության կյանքը պիտի ասել, որ բավականին աշխույժ է. ուսանողները մասնակցում են Ծեմարանի բոլոր հանդեսներին, որտեղ կատարվում են եկեղեցական, հայրենասիրական, ինչպես նաև հայկական ժողովրդական երգեր և խմբերգեր: Նրանք մասնակցում են նաև առավոտյան և երեկորան ժամերգություններին, իսկ կիրակիները՝ սուրբ պատարագին՝ գործում մասնակցություն բերելով երգեցողությանը:

Ծեմարանի ներսում գործում է ուսանողներից բաղկացած արական բազմաձայն երգչախումբը, որի փորձերը տեղի են ունենում դասերից հետո՝ երեկորան ժամերին: Երգչախմբի փորձերը անց են կացվում բավականին հետաքրքիր, ուրախ և աշխույժ տրամադրությամբ, ուսանողների միտքը և հոգեկանը թարմացնելու համար:

Ուսանողների գեղարվեստական ճաշակը և երածտության դաստիարակությունը զարգացնելու նպատակով հաճախ երանք ներկա են լինում սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական երգչախմբի և նման դասական համերգների՝ հոգեստ Ծեմարանի տեսչության գլխավորությամբ:

Ուսանողներից մի քանիքը մեծ ջանահրությամբ զբաղվում են երածտության ա-

ռարկաների ուսումնասիրությամբ՝ խորացնելով իրենց գիտելիքները այդ բնագավառում: Այսպիսի ուսանողների նկատմամբ հոգեստ Ծեմարանի տեսչությունը, ինչպես նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա. Հայրապետը, հնարավորություններ և միջոցներ չեն խնայում ինչպես անցյալում, այնպես էլ այժմ:

Տեսչությունը հատուկ երաժիշտ-ուսուցիչների խնամքին և դաստիարակության է հանձնել երածտության մեջ մասնակիոր հակում ունեցող ուսանողների երածտության կրթությունը:

Վեհափառ Հայրապետը և սուրբ Էջմիածնի հոգեստ Ծեմարանի տեսչությունն ու դաստիարական կազմը ջանքեր և եռանդ չեն խնայում, որպեսզի հոգեստ Ծեմարանի ավարտած ուսանողները, որոնք կոչվել են հովիվները դաստիարությաց առաքելական և եկեղեցվո, լինեն զարգացած, հոգով մաքոր և ազնիվ հոգևորականներ, հայ ժողովրդի դարավոր երածտության գանձերի և մշակույթի բաջ գիտակ, բանիմաց հովիվներ:

Ուսանողները դաստիարակվում են այս ոգով, այս գիտակցությամբ, և նրանցից յուրաքանչյուրը զգում է սեփական ժողովրդին ծառապելու ազնիվ և քաղցր պարտականությունը:

